Նրանք մոռանում են նշել , որ Օշոյին չէին տվել աշխարհի 21 տարբեր երկրների մուտքի թույլտվություն: Ռաջնեշի հետևորդները ոչ մի խնդիր չեն տեսնում , որ իրենց «աստվածը» այցելում է երկիր և մուտքի

թույլտվություն է ստանում մտնել տարբեր երկրներ:

Եկեք այս աստվածայնության թեկնածուին, Բհագվան Ռաջնեշին դիտենք աստվածաբանության հիմնաքարի, Սուրա Իխլասի տեսանկյունից:

(i) Առաջին չափանիշն է «Ասա, Նա Ալլահն է , մեկը և միակը:» Արդյո՞ք Ռաջնեշը մեկը և միակն էր : Ոչ: Գոյություն ունեն Ռաջնեշի նման շատ մարդիկ, ովքեր հայտարարում են աստվածայնություն: Ռաջնեշի որոշ աշակերտներ , մինչ այժմ

հավատում են, որ նա մեկը և միակն է :

(ii) Երկրորդ չափանիշն է «Ալլահը կատարյալ և հավերժ է:» Անկասկած, Ռաջնեշը կատարյալ չէր և ոչ էլ հավերժ, քանի որ նա մահացավ 1990 թվականին: Նրա կենսագրությունից մենք գիտենք, որ նա տառապում էր շաքարախտից, ասթմայից և քրոնիկ մեջքի ցավերից: Նա ենթադրում էր , որ Միացյալ Նահանգների կառավարությունը բանտում նրան դանդաղ գործող թույն էր տվել: Պատկերացրեք Ամենազոր Աստվածը, ում թունավորում են : Ռաջնեշը ոչ կատարյալ, ոչ էլ հավերժ էր:

(iii) Երրորդ չափանիշն է. «Նա չի ծնում, ոչ էլ Նա ծնվում է:» Մենք գիտենք , որ Ռաջնեշը ծնվել էր Հնդկաստանում, Ջաբալփուրում և ուներ հայր և մայր, ովքեր հետագայում դարձան նրա աշակերտները:

1981 թվականի մայիսին, նա մեկնեց ԱՄՆ և հաստատեց քաղաք, որը կոչվեց «Ռաջնեշփուրում:» Հետագայում նա բախվեց Արևմուտքին և ի վերջո նրան ձերբակալեցին և խնդրեցին լքել երկիրը: Նա վերադարձավ Հնդկաստան և հիմնեց համայնք Փունում, որը հիմա հայտնի է որպես «Օշո» համայնք: Նա մահացավ 1990

թվականին: Օշո Ռաջնեշի հետևորդները հավատում են, որ նա Ամենազոր Աստվածն է ։ «Օշո» համայնքի այցելուն Փունում, կարող է գտնել նրա գերեզմանի տապանագիրը. «Օշո, երբեք չի ծնվել, երբեք չի մահացել, միայն այցելել է երկիր մոլորակը 1931 թվականի դեկտեմբերի 11-ից մինչ 1990 թվականի հունվարի 19-ը:»

Նրանք մոռանում են նշել, որ աշխարհի 21 երկիր մերժեց տալ նրան մուտքի թույլտվություն :Կարո՞ղ է արդյոք մարդ ,որ «Աստված» այցելում է երկիր և մուտքի թույլտվություն է ստանում ։ Հունաստանի

արքեպիսկոպոսը ասաց, որ եթե Ռաջնեշը չհեռանար, նրանք կայրեյին նրա և աշակերտների տները :

Չորրորդ փորձությունը,որը ամենաուժեղն է, այն է , «Որ չկա ոչ որք Նրա նման:» Այն պահը , երբ դու կարող ես պատկերցնել «Աստծոն» կամ համեմատել «Աստծոն» որևէ բանի հետ , ապա նա , աստվածայնության թեկնածուն ,Աստված չէ:Հնարավոր չէ ունենալ Մեկ Ճշմարիտ Աստծո մտովի պատկերը : Մենք գիտենք, որ Ռաջնեշը մարդկային արարած էր, սպիտակ սահող մորուքով: Նա ուներ երկու աչք, երկու ականջ,

մեկ քիթ, մեկ բերան: Ռաջնեշի լուսանկարները և պաստառները շատ մատչելի են: Այն պահը, երբ դու կարող ես պատկերացնել, թե ինչ է աստվածը, նա Աստված չէ:

Շատերը գայթակղության են ենթարկվում համեմատելու , թե ում է տրվել Պարոն Տիեզերքի տիտղոսը, ով աշխարհի ամենաուժեղ մարդն է: Ո՞րն է այս «փորձի» եզրակացությունը: Այսպիսի փորձությունը ոչ ոք չի կարող անցնել, բացառությամբ Ճշմարիտ Աստծո:

## Ի՞ՆՉ ԱՆՈՒՆՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ ԿՈՉՈՒՄ ԱՍՏԾՈ

Մուսուլմանները գերադասում են կոչել Ալլահ, անգլերեն «Աստված» բառի փոխարեն:Արաբերեն «Ալլահ» բառը մաքուր և յուրահատուկ է , և նման չէ անգլերեն «Աստված» բառին, որը կարելի է ձևափոխել:

Եթե դուք ավելացնեք Աստված բառին «ներ» մասնիկը , այն կդառնա «Աստվածներ, որը հոգնակի թիվ է: Ալլահը մեկն է և եզակի, չկա հոգնակի Ալլահի համար : Եթե դուք ավելացնեք «ուհի» մասնիկը Աստված բառին, ապա այն կդառնա «Աստվածուհի» , որը կին Աստված է նշանակում: Գոյություն չունի արական Ալլահ

կամ իգական Ալլահ: Ալլահը սեռ չունի: Եթե դուք ավելացնեք այլ ածանցներ, ապա «Աստված» բառը կարող է ստանալ օրինակ կեղծ Աստված կամ այլ իմաստներ: Ալլահը յուրահատուկ բառ է. որը չի կարող համեմատվել որևէ մտավոր պատկերի հետ , կամ էլ հնարավոր է խաղալ այդ բառի շուրջ: Ուստի , մուսուլմանները գերադասում են ասել «Ալլահ», սակայն, երբեմն , զրուցելով ոչ մուսուլմանի հետ, մենք կարող ենք օգտագործել Ալլահ բառին ոչ համապատասխան Աստված բառը: Քանի որ , այս գրքի ընթերցողները և մուսուլմաններ և ոչ մուսուլմաններ են , որոշ

մասերում ես գործածել եմ Ալլահի բառի փոխարեն Աստված բառը:

## ԱՍՏՎԱԾ ՉԻ ԴԱՌՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԱՐԱԾ

Ոմանք վիճում են, որ Աստված կարող է անել ամեն ինչ, և այդ դեպքում ինչու՞ Նա չի կարող վերցնել մարդկային կերպարանք: Եթե Աստված ցանկանա, Նա կարող է դառնալ մարդ արարած: Սակայն, այդ դեպքում, նա չի մնա Աստված, որովհետև Աստծո և մարդ արարածի հատկանիշները բավականին անհամեմատելի են: Հետևյալ հատվածը ցույց կտա Աստծո մարդ արարած դառնալու գաղափարի անհեթեթությունը:

Աստված անմահ է և մարդ արարածները մահկանացու: Դուք չեք կարող ունենալ Աստված-մարդ, այսինքն, անմահ և միևնույն ժամանակ և նույն ժամանակում էություն:Այդ անիմաստ է:Աստված չունի սկիզբ, մինչ դեռ մարդ արարածները ունեն : Դուք չեք կարող ունենալ որևէ մեկին, ով չունի սկիզբ և միևնույն ժամանակ ունի:Մարդ արարածները ունեն ավարտ: Դուք չեք կարող ունենալ արարած, ով չունի ավարտ և միևնույն ժամանակ ունի: Այդ անիմաստ է:

Ամենակարող Աստվածը կարիք չունի սննդի, մինչ դեռ մարդկային

արարածները կարիք ունեն , որպեսզի պահպանեն կյանքը:

« Եվ Նա Նա է, ով կերակրում է , սակայն չի սնվում: »

(Սուրբ Ղուրան 6:14)

Աստված կարիք չունի հանգստի կամ քնի, մինչդեռ մարդկային արարածները չեն կարող առանց դրանց:

« Սակայն Նա- Ապրող, Ինքնաբավ է, Հավերժ: Ոչ մի նինջ կամ ոչ էլ քուն չի կարող պատել Նրան: Նա երկնքներում և երկրի վրա ամեն բանն է:»

(Սուրբ Ղուրան 2:255)

# ՄԵԿ ԱՅԼ ՄԱՐԴՈՒՆ ԵՐԿՐՊԱԳԵԼՆ ԱՆԻՄԱՍՏ Է.

Եթե Աստծո, մարդ դառնալու գաղափարը անընդունելի է , մենք պետք է նաև համաձայնենք, որ իմաստ չկա երկրպագել մեկ այլ մարդ արարածի: Եթե Աստված ընդունում է մարդու կերպար, Նա դադարում է լինել Աստված և ունենում է մարդուն բնորոշ բոլոր հատկանիշները: Օրինակ, եթե հանճարեղ պրոֆեսորի հետ պատահար է տեղի ունենում և նա տառապում է անդառնալի հիշողության կորստով, ապա հիմարություն է նրա աշակերտների կողմից առարկայի դասերը շարունակել:

Ավելին, եթե Աստված վերցնում է մարդու կերպարանք, նույն մարդը կարող է ավելի ուշ դառնալ Աստված, մինչ դեռ մարդկային արարածները, իրենց սահմանումով , չունեն հզորություն դառնալու Աստված: Ուստի, Աստծո երկրպագությունը մարդկային կերպարանքով , տրամաբանական կեղծիք է և պետք է հերքվի ամեն դրսևորումներով:

Այդ է պատճառը, որ Սուրբ Ղուրանը դեմ է ամեն տեսակի աստվածային մարմնացումներին: Փառահեղ Ղուրանը հետևյալ տարբերակում ասում է.

« Չկա ոչինչ, ինչպես արարել նրան:»

(Ղուրան 42:11)

## ԱՍՏՎԱԾ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԻՐԵՆ ՈՉ ՎԱՅԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ամենազոր Աստծո ածականները կանխում են ցանկացած չարիք, քանի որ Աստված արդարության, գթասրտության և ճշմարտության սկզբնաղբյուրն է:Երբեք մի կարծեք , որ Աստված կարող է անել անաստվածային գործողություններ:Ուստի, մենք չենք կարող պատկերացնել Աստծոն, ով սուտ է ասում,

անարդար է , սխալներ է գործում, մոռանում է և ունի այսպիսի մարդկային ձախողումներ: Հետևապես, Աստված կարող է անել անարդարություններ, եթե նա ցանկանա, սակայն Նա երբեք չի անի այդ , քանի որ անարդար լինելը անաստվածային արարք է:

Սուրբ Ղուրանը ասում է.

«Ալլահը երբեք անարդար չէ, ամենաքիչ աստիճան անգամ:»

(Սուրբ Ղուրան 4:40)

Աստված կարող է լինել անարդար, եթե նա ցանկանա, սակայն այն պահը , երբ նա

անարդարություն է անում, Նա դադարում է լինել Աստված:

## ԱՍՏՎԱԾ ՈՉ ՄՈՌԱՆՈՒՄ Է , ՈՉ ԷԼ ՆԱ ՍԽԱԼՆԵՐ Է ԳՈՐԾՈՒՄ՝

Աստված չի մոռանում որևէ բան, որովհետև մոռանալը անաստվածային արարք է, որը բնորոշ է մարդկային սահմանափակումներին և ձախողումներին: Նմանապես, Աստված չի գործի սխալ, քանի որ սխալ գործելը անաստվածային արարք է :

«.....իմ Տերը երբեք չի սխալվում, ոչ էլ մոռանում է:»

( Սուրբ Ղուրան 20:52)

## ԱՍՏՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՐԱՐՔՆԵՐ.

Նա ունի իշխանություն ամենի վրա:Աստծո գաղափարը Իսլամում այն է, որ Աստված ունի իշխանություն ամենի վրա: Սուրբ Ղուրանը շատ տարբերակներում ասում է.

«Քանի որ, իրոք Ալլահը ունի իշխանություն ամենի վրա»

(Սուրբ Ղուրան 2:106)

( Սուրբ Ղուրան 2:109)

(Սուրբ Ղուրան 2:284)

(Սուրբ Ղուրան 3:29)

(Սուրբ Ղուրան 16:77)

(Սուրբ Ղուրան 35:1)

Այնուհետ Փառահեղ Ղուրանն ասում է.

« Ալլահը անում է ամենը, ինչ Նա մտադրվում է :»

(Սուրբ Ղուրան 85:16)

Մենք պետք է մտապահենք, որ Ալլահը մտադրվում է միայն Աստվածային արարքներ և ոչ թե անաստվածային :

Շատ կրոններ, կամա թե ակամա , որոշակի պահի հավատում են աստծո մարմնացման փիլիսոփայությանը, այսինքն, որ

Աստված դառնում է մարդ: Նրանց ճիգը այն է , որ Ամենազոր Աստվածը այնքան անբիծ և սուրբ է, որ Նա անտեղյակ է դժվարություններին, ձախողումներին և մարդկային զգացմունքներին : Որպեսզիմարդկային արարածների համար սահմանի կանոններ, Նա գալիս է երկիր մարդու կերպարանքով : Այս խաբուսիկ տրամաբանությունը հիմարացնում է միլիոնավոր մարդկանց դարեր շարունակ: Եկեք հիմա վերլուծենք այս խնդիրը և տեսնեք, արդյոք այն կդիմակայի պատճառի:

# ԱՐԱՐԻՉԸ ՊԱՏՐԱՍՏԵԼ Է ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Ալլահը օժտել է մեզ, մարդկանց բանականությամբ և մտածելու ունակությամբ ։ Մենք հայտագործում և արտադրում ենք գործիքներ, որոշակի նպատակների համար ։ Օրինակ, արտադրել ենք մեծ քանակությամբ ձայնագրիչներ: Երբեք չի եղել առաջարկ, որ, որպեսզի հասկանալ , թե ինչն է լավ ձայնագրիչի համար , արտադրողը պետք է ինքը դառնա ձայնագրիչ:Պետք է ենթադրել , որ արտադրողը կտպագրի ուսուցողական ձեռնարկ, քանի որ նա ունի իր արտադրանքի

կատարյալ գիտելիքը: Հակիրճ, ուսումնական ձեռնարկը տալիս է մեքենայի կարելի և չի կարելիները:

Եթե դուք պատկերացնում եք մարդ արարածին, որպես մեքենա, ապա այն , իրոք, հանդիսանում է Ալլահի բարդ արարած: Մեր Տերը և Արարիչը, Ալլահը, կարիք չունի գալու մարդու կերպարանքով , որպեսզի իմանա , թե ինչն է լավ կամ վատ մարդ արարածի համար : Նա միայն, պետք է լուսաբանի ուսումնական ձեռնարկը մարդկությանը : Սուրբ Ղուրանը մարդ արարածների համար ուսումնական ձեռնարկ է :

Ավելին, Դատաստանի Օրը Ալլահը իր արարածներին հաշվի կկանչի: Ուստի, այդ պատճառով, Արարիչը տեղեկացնում է մեզ կյանքի կարելիների և չի կարելիների մասին :

## ԱԼԼԱՀԸ ԸՆՏՐՈՒՄ Է ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Ալլահը կարիք չունի անձամբ իջնել գրելու ուսումնական ձեռնարկ:Դարեր շարունակ Ալլահը ընտրել է տարբեր ազգերից մարդկանց, առաքելու Աստվածային ուղերձը: Այսպիսի ընտրյալները կոչվում են Աստծո առաքյալներ և մարգարեներ :

## ՈՐՈՇ ՄԱՐԴԻԿ «ԿՈՒՅՐ» և «ԽՈՒԼ» ԵՆ.

Չնայած մարմանվորման փիլիսոփայության անհեթեթության, շատ կրոնների հետևորդներ հավատում և քարոզում են այն ուրիշներին: Արդյո՞ք այդ վիրավորանք չէ մարդկային բանականությանը և Արարչին, ով մեզ տվել է այն: Այսպիսի մարդիկ, իրոք «խուլ» են և «կույր», չնայած այն բանի որ Ալլահը տվել է նրանց այդ ունակությունները : Սուրբ Ղուրանը ասում է .

« Խուլ, համր և կույր , նրանք չեն վերադառնա ուղղու:»

(Սուրբ Ղուրան 2:18)

Աստվածաշունչը , Մատթեոսի Ավետարանում , տալիս է նույնանման տարբերակ.

« Տեսնելով, նրանք չեն տեսնում և լսելով նրանք չեն լսում , ոչ էլ նրանք հասկանում են:»

(Մատթեոս 13:13)

Նմանատիպ տարբերակ նույնպես տրված է Հինդուական գրերում, Ռիգվեդայում

« Միգուցե կա որևէ մեկը, ով տեսնում է բառերը և դեռ , իրոք, չի տեսնում դրանք, միգուցե մեկ ուրիշը լսում է այս բառերը , սակայն, իրոք չի լսում դրանք :»

(Ռիզվեդա10:71:4)

Այս բոլոր Գրերը ասում են իրենց ընթերցողներին, որ չնայած շատ բաներ այդքան ակնհայտ են , նրանք տարբերվում են ճշմարտությունից:

## ԱՍՏԾՈ ԱԾԱԿԱՆՆԵՐԸ

Ալլահին է պատկանում ամենագեղեցիկ անունները.

Սուրբ Ղուրանն ասում է .

« Ասա.կոչեք Ալլահին, կամ կոչեք Ռահմենին,ինչ անունով էլ , որ դուք կոչեք Նրան, լավ է , քանի որ Նրան է պատկանում Ամենագեղեցիկ Անունները:»

(Սուրբ Ղուրան 17:110)

Նմանատիպ հատվածներ , որոնք կապված են Ալլահի գեղեցիկ անունների հետ , կրկնվում են Սուրբ Ղուրանի Սուրա Ալ-Աարաֆի (7:180), Սուրա Տահայի (20:8 )և Սուրա Ալ-Հաշրի (59:23-24) մեջ:

Ղուրանը տալիս է մոտ 99 տարբեր ածականներ Ամենազոր Աստծոն, որտեղ թագավորողը Ալլահն է : Ղուրանը վերաբերում է Ալլահին ինչպես Առ-Ռահմեն, Ամենաողորմած, Առ-Ռահիմ, Ամենաբարեգութ և Ալ- Հակիմ, Ամենաիմաստուն , մյուս բոլոր անուններից: Դուք կարող եք կոչել

Ալլահին ցանկացած անունով, սակայն այն պետք է լինի գեղեցիկ և չպետք է համապատասխանի մտավոր պատկերի :

## ԱՍՏԾՈ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԾԱԿԱՆ ԵԶԱԿԻ Է և ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՆՐԱՆ.

Աստված ոչ միայն ունի եզակի ածականներ, այլև Ամենազոր Աստծո յուրաքանչյուր ածական , բնութագրում է Նրան: Ես կբացատրեմ այ մանրամասնորեն : Պատկերացնենք, որ մենք որպես օրինակ ենք վերցնում հայտնի անձնավորության, ասենք

տիեզերագնաց Նեյլ Արմսթրոնգին:

Եթե որևէ մեկը ասի , որ Նեյլ Արմսթրոնգը ամերիկացի է ,ապա ածականը ,որ նա ամերիկացի է և պատկանում է Նեյլ Արմսթրոնգին , ճիշտ է , սակայն չի բնութագրում նրան :Նմանատիպ ,Նեյլ Արմսթրոնգը տիեզերագնաց է :Տիեզերագնաց լինելու ածականը եզակի չէ Նեյլ Արմսթրոնգին: Որպեսզի բնորոշենք անհատին եզակիորեն, մենք պետք է փնտրենք եզակի ածական : Օրինակ, Նեյլ Արմսթրանգը առաջին մարդն էր, ով ոտք էր դրել լուսին : Այսպիսով, երբ որևէ մեկը հարցնի, թե ով էր առաջին մարդը,

ով ոտք դրեց լուսին, պատասխանը միայն մեկն է , այսինք Նեյլ Արմսթրոնգը: Նմանապես Ամենազոր Աստծո ածականը պետք է լինի եզակի, այսինքն, Տիեզերքի Արարիչ: Եթե ես ասում եմ շենքի արարիչ, այն հնարավոր է որ ճիշտ է , սակայն ոչ եզակի: Հազարավոր մարդիկ կարող են կառույց կառուցել, այսպիսով ոչ մի տարբերություն չի լինի մարդու և Աստծո միջև: Սակայն Ալլահի յուրաքանչյուր ածական , մատնանշում է միայն Ալլահին:

Օրինակ.

«Ար-Ռահիմ» Ամենաողորմած

«Առ-Ռահման» Ամենաբարեգութ

«Ալ-Հակիմ» Ամենաիմաստուն

Այսպիսով, երբ մեկը հարցնում է , ով է «Առ-Ռահիմ», ամենաողորմածը , միայն մեկ պատասխան է անհրաժեշտ որն է Ամենազոր Ալլահը :

## ԱԼԼԱՀԻ ՄԵԿ ԱԾԱԿԱՆԸ ՉՊԵՏՔ Է ՀԱԿԱՍԻ ՄՅՈՒՍ ԱԾԱԿԱՆՆԵՐԻՆ

Շարունակելով նախորդ օրինակը , եթե որևէ մեկը ասում է , որ Նեյլ Արմսթրոնգը Ամերիկացի տիեզերագնաց է , ով միայն չորս ոտնաչափ է բարձր, ածականը , ամերիկացի տիեզերագնացը,

ճիշտ է , սակայն այն բնութագրում է որակ, որը և կեղծ է : Նմանապես , եթե որևէ մեկը ասում է , որ Աստված Տիեզերքի Արարաիչն է մեկ գլխով, երկու ձեռքերով , երկու ոտքերով և այլն, ապա Տիեզերքի Արարիչ ածականը ճիշտ է , սակայն բնութագրում է որակ , որը սխալ և կեղծ է:

## ԲՈԼՈՐ ԱԾԱԿԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՆՇԵՆ ՄԵԿ և ՄԻևՆՈՒՅՆ ԱՍՏԾՈՆ

Քանի որ գոյություն ունի միայն մեկ Աստված, բոլոր ածականները պետք է նշեն մեկ և միևնույն Աստծոն:Ասել, որ Նեյլ

Արմսթրոնգը ամերիկացի տիեզերագնաց էր, ով առաջինը ոտք դրեց լուսին , սակայն երկրորդը Եդվին Ալդրինն է, սխալ է : Երկուսն էլ ունեն Եզակի Որակներ: Նմանապես ասել, որ Արարիչը մեկ Աստված է և Սնուցողը մեկ այլ, դառնում է անհեթեթ, որովհետև գոյություն ունի միայն մեկ Աստված այս բոլոր ածականներով , որոնք համակցված են միմյանց:

## ԱՍՏԾՈ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ բազմաստվածներ վիճում են ասելով, որ ավելի քան մեկ Աստծո գոյությունը տրամաբանական չէ:

Եկեք մատնանշենք նրանց, որ , եթե գոյություն ունենան ավելի քան մեկ Աստված, նրանք կվիճեն միմյանց հետ, յուրաքանչյուրը ձգտելով լրացնել իր կամքը , մյուսների նկատմամբ : Այս տեսանելի է բազմաստվածների և այդպիսի կրոնների առասպելաբանությունում:Եթե «Աստված» պարտվում է կամ ի վիճակի չէ հաղթել մյուսներին, նա , անշուշտ ճշմարիտ և մեկ Աստվածը չէ: Շատ բազմաստված կրոններում հայտնի է շատ Աստվածների գաղափարը , որոնցից յուրաքանչյուրը ունի տարբեր պատասխանատվություն: Յուրաքանչյուրը

պատասխանատու է մարդու գոյության մի մասին, օրինակ Արև աստված, Անձրև Աստված և այլն : Այս նշում է , որ մեկ «Աստված» ունակ չէ որոշակի արարքների և ավելին, նա տեղյակ չէ մյուս Աստվածների պարտավորություններին և պատասխանատվություններին: Չի կարող գոյություն ունենալ անպատասխանատու և անտեղյակ Աստված: Եթե գոյություն ունենար ավելի քան մեկ Աստված, այն կտաներ խառնաշփոթության , քաոսի, անկարգության և Տիեզերքի կործանման:Սակայն տիեզերքը կատարյալ ներդաշնակության մեջ է :

Սուրբ Ղուրանը ասում է.

«Եթե երկինքներում և երկրի վրա գոյություն ունենար Ալլահից բացի այլ աստվածներ, երկուսում էլ կլիներ խառնաշփոթ: Սակայն , փառք Ալլահին, Գահի Տիրոջը, Նա Բարձր է ամենից, Ինչ նրանք բնորոշում են Նրան:»

(Սուրբ Ղուրան 21:22)

Եթե լիներ ավելի քան մեկ Աստված, նրանք կվերցնեյին այն, ինչ արարել էին: Սուրբ Ղուրանը ասում է.

« Ոչ մի զավակ Ալլահը չի ծնել, ոչ էլ գոյություն ունի որևէ աստված Նրա հետ, եթե լինեին շատ

աստվածներ, հիշեք, որ յուրաքանչյուր աստվածը կվերցներ ինչ արարել էր և ոմանք էլ Տեր կլինեին մյուսներին: Փառք Ալլահին: Նա զերծ է ամեն բաներից , որ նրանք են բնորոշել Նրան:»

(Սուրբ Ղուրան 23:91)

Ուստի, մեկ Ճշմարիտ , Գերագույն Ամենազոր Աստծո գոյությունը Աստծո գաղափարի ամենատրամաբանական տարբերակն է:

Գոյություն ունեն մի քանի կրոններ, ինչպիսիք են Բուդդայականությունը կամ Կոնֆուցիականությունը, որոնք

ագնոստիկ կրոններ են: Նրանք չեն վկայում Աստծոն: Նրանք ոչ հաստատում, ոչ էլ մերժում են Աստծո գոյությունը :Գոյություն ունեն այլ կրոններ, ինչպիսիք են Ջայիզմը, որոնք աթեիստ կրոններ են և որոնք չեն հավատում Աստծո գոյությանը :

Աստծո կամոք, ես կհրատարակեմ գիրք ;Արդյո՞ք Ղուրանը Աստծո Խոսքն է «վերնագրով, որը ,փառք Աստծո, հիմնվելով Սուրբ Ղուրանին ,տրամաբանորեն, գիտականորեն կարող է ապացուցել Ալլահի գոյությունը աթեիստին կամ ագոնիստին:»

## ԲՈԼՈՐ ԿՐՈՆՆԵՐԸ ՎԵՐՋԻՆ ՀԱՇՎՈՎ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆ ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ

Բոլոր հիմնական կրոնները, որոնք վերջին հաշվով հավատում են Աստծո գոյությանը , բարձր աստիճանով , հավատում են մեկ գերագույն Աստծո: Փաստորեն ,բոլոր կրոնական գրերը խոսում են միաստվածության մասին, այսինքն հավատում են միայն մեկ ճշմարիտ Աստծո:

## ՄԱՐԴԻԿ ՓՈԽԵԼ ԵՆ ԳՐԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՎ ԻՐԵՆՑ ՇԱՀԵՐԻՆ

Ժամանակի ընթացքում, կրոնական գրերից շատերը

աղավաղվել և փոփոխվել են մարդկանց կողմից, իրենց իսկ շահերին համապատասխանեցվելով: Շատ կրոնների սկզբնաղբյուրը , աղավաղվել է միաստվածությունից բազմաստվածություն կամ պանթեիզմի: Սուրբ Ղուրանն ասում է .

« Ապա նզովք նրանց, ովքեր գրում են Գիրքը իրենց իսկ ձեռքերով, և այնուհետ ասում են. « Այս Ալլահից է » շահագործելով այն չնչին արժեքով: Նզովք նրանց, այն բանի համար , թե ինչ են գրում նրանց ձեռքերը և շահի, որը նրանք ստանում են :»

( Սուրբ Ղուրան 2:79)

## ԹԱՈՒՀԻԴ

## ՍԱՀՄԱՆՈՒՄԸ և ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ

Իսլամը հավատում է «Թաուհիիդին», որը պարզապես միաստվածություն չէ, այսինքն հավատք մեկ եզակի Աստծո, այլ շատ ավելին: Թաուհիիդ, նշանակում է «միավորում», այսինքն, «հաստատել միակություն» և առաջանում է արաբերեն «ուահհադա» բայից, որը նշանակում է միավորել, միացնել կամ ամրացնել:

Թաուհիդը կարելի է բաժանել երեք դասակարգի.

(i) Թաուհիդ առ-Ռուբուբեյահ

(ii) Թաուհիդ ալ-Ասմաա- ուաս- սիֆաաթ

(iii) Թաուհիդ ալ-Իբաադահ

## Ա. ԹԱՈՒՀԻԴ ԱՌ-ՌՈՒԲՈՒԲԵՅԱՀ, ՊԱՀՊԱՆԵԼ ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին դասակրգումը «Թաուհիդ առ-Ռուբուբեյահ»-ն է: «Ռուբուբեյա» բառը ծագել է «Ռաբբ» բառի արմատից, որը

նշանակում է Տեր, Մնուցեղ և Գոյության Պարգևող:

Ուստի, «Թաուհիիդ առ-Ռուբուբեյյահ» նշանակում է պահպանել Աստվածության միությունը: Այս դասակարգումը հիմնված է միայն Ալլահի հիմնական գաղափարին, որը պատճառ է ամենի գոյության, երբ ոչինչ չկար: Նա արարեց ամեն գոյությունը ոչնչից: Միայն Նա է ամբողջ տիեզերքի և նրա միջև գոյություն ունեցող ամենի Սնուցողը և Գոյության պահպանողը: Նա կարիք չունի դրանից կամ դրա համար :

## Բ. ԹԱՈՒՀԻԻԴ ԱԼ – ԱՍՄԱԱ ՈՒԱՍ- ՍԻՖԱԱԹ ՊԱՀՊԱՆԵԼ ԱԼԼԱՀԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ և ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ դասակրգումը «Թաուհիիդ ալ Ասմաա ուաս Միֆաաթ»-ն է , որը նշանակում է պահպանել Ալլահի անունների և ածականների միությունը: Այս դասակրգումը բաժանվում է հինգ տեսակների.

(i) Ալլահին պետք է դիմել , ինչպես նկարագրել է Նա և Նրա Մարգարեն.

Ալլահին պետք է դիմել այնպես , որ Նրան և Նրա մարգարեյին

նկարագրեն առանց բացատրելու Նրա անունների և ածականների իմաստները, որոնք ակնհայտ են :

(ii) Ալլահին պետք է դիմել այնպես , կարծես Նա Իրեն է վերաբերվում.

Ալլահին պետք է դիմել առանց Նրան որևէ նոր անուն կամ ածական տալու: Օրինակ ,Ալլահին պետք չէ տալ ալ-Ղաադիբ, Բարկացած, անունը, չնայած այն փաստի, որ Նա ասել է , որ Նա բարկանում է , որովհետև ոչ Ալլահը, ոչ էլ Նրա մարգարեն չեն գործածել այս անունը :

(iii) Ալլահին պետք է դիմել այնպես, որ Նրան չտրվի Նրա

արարածի ածականները:Ինչ վերաբերում է Աստծոն, մենք խստորեն պետք է զերծ մնանք Նրան տալու այնպիսի ածականներ, որոնք տրվում են Նրա արարածներին :Օրինակ Աստվածաշնչում Աստծոն նկարագրում են , կարծես նա զղջում է իր վատ մտքերի համար նույն կերպ, ինչպես մարդիկ են անում, երբ նրանք գիտակցում են իրենց սխալները :Այս ամբողջովին դեմ է Թաուհիիդի սկզբունքին: Աստված չի զղջում և Նա ոչ մի սխալ չի գործում:

Ալլահին ածականներին վերաբերող սկզբունքի բանալին

տրված է Սուրբ Ղուրանի Աշ-Շուրահ սուրայում.

«Չկա ոչինչ, Ինչ նման է Նրան և Նա Մեկն է , որ լսում և տեսնում է ամենը:»

Չնայած տեսնել և լսելը մարդկային որակներ են, սակայն ,երբ վերաբերում են Աստվածային Էությանը , դրանք իրենց կատարյալությամբ համեմատելի չեն ,ի տարբերություն ,երբ մենք նմանեցնում ենք մարդկանց , ովքեր ունեն ականջներ, աչքեր և այլն և ովքեր սահմանափակ են իրենց տեսողությամբ և լսողությամբ :

(iv) Մարդուն պետք չէ տալ Աստծո որևէածական:

Մարդուն դիմել Աստծոն վերաբերող ածականով , նույնպես դեմ է Թաուհիդին: Օրինակ, վերաբերել մարդուն ,կարծես մեկի, ով չունի սկիզբ և վերջ, հավերժ է:

(v) Ալլահի անունները չի կարելի տալ նրա արարածներին: Որոշ աստվածային անուններ , անուղղակի ձևով, ինչպես «Ռաուֆ» կամ «Ռահիմ» թույլատրելի են օգտագործել որպես տղամարդկանց անուններ, քանի որ Ալլահը գործածել է դրանք Մարգարեների համար :

Սակայն «Առ-Ռաուֆ», Ամենաանքիծ և Առ-Ռահիմ, ամենաողորմած անունները պետք է գործածել «Աբդ» նախածանցով , որը նշանակում է «ստրուկ», այսինքն «Աբդուր Ռաուֆ» կամ «Աբդուր –Ռահիմ»:

## Գ. ԹԱՈՒՀԻԻԴ ԱԼ – ԻԲԱԱԴԱՀ, ՊԱՀՊԱՆԵԼ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

(i) «Իբադաահ» բառի սահմանումը և նշանակությունը.

«Թաուհիիդ ալ- Իբաադահ» նշանակում է պահպանել երկրպագության միությունը կամ «Իբաադահին»: Իբաադահ բառը

ծագել է արաբերեն «Աբդ» բառից, որը նշանակում է ստրուկ կամ ծառա: Ուստի Իբաադահ նշանակում է երկրպագություն և ծառայություն: Իբաադայի բարձրագույն ձևը Սալաահն է այսինքն, երկրպագություն, սակայն այն միակ ձևը չէ: Մարդիկ սխալ են ընկալել, որ Ամենազոր Աստծո երկրպագությունը նշանակում է ծիսական աղոթքներ, սակայն Իսլամում երկրպագության գաղափարը ներառում է լիակատար հնազանդություն, ծառայություն և ենթարկվածություն: Հետևել Աստծո պատվիրաններին և զերծ մնալ բաներից, որ նա արգելել է

նույնպես Իբաադահ է և այս երկրպագությունը միայն հանուն Ալլահի է և ոչ այլ մեկի:

(ii) Բոլոր երեք տեսակներին պետք է հետևել միաժամանակ:

Միայն հավատալ Թաուհիիդի առաջին երկու տեսակներին, առանց իրականացնելու Թաուհիիդ –ալ- Իբաադահն , անօգուտ է : Ղուրանը տալիս է Մարգարեյի ժամանակաշրջանի «Մուշրիկ»- ների , կռապաշտների օրինակներ, ովքեր հաստատում էին Թաուհիիդի առաջին երկու դասակարգերը: Սուրբ Ղուրանում ասվում է .

Ասա. « Ո՞վ է այն, որ Սնում է ձեզ կյանքի ընթացքում երկնքից և երկրից: Կամ, ո՞վ է այն, որ ունի իշխանություն լսողության և տեսողության վրա: Եվ, ո՞վ է այն, որ դուրս է հանում կենդանուն մահացածից և մահացածին կենդանուց:Եվ, ո՞վ է այն, որ կառավարում և կարգավորում է բոլոր գործերը: Նրանք շուտով կասեն. «Ալլահը»:Ասա, «Արդյո՞ք դուք չեք ցույց տա ողջախոհություն Նրան:»

( Սուրբ Ղուրան 10:31)

Նմանատիպ օրինակ է կրկնվում Սուրբ Ղուրանի « Զուքրուֆ» Սուրայում.

« Եթե դուք հարցնեք նրանց, Ո՞վ է արարել նրանց, նրանք անշուշտ կասեն, Ալլահը, ապա ինչպե՞ս են նրանք հեռացել ճշմարտությունից:»

(Սուրբ Ղուրան 43:87)

Կռապաշտ Մեքքացիները գիտեին, որ Ալլահը նրանց Արարիչը, Սնուցողը, և Տերն է : Սակայն նրանք մուսուլմաններ չէին, որովհետև նրանք բացի Ալլահից նույնպես երկրպագում էին իրենց աստվածներին: Ալլահը դասակարգեց նրանց, որպես «Քուֆար» անհավատ և «Մուշրիկ» կռապաշտ և նրանք ,

ովքեր Աստծո հետ զուգընկեր էին տալիս:

« Եվ նրանց մեծամասնությունը չէին հավատում Ալլահին, առանց Նրա հետ զուգընկեր տալու:»

(Սուրբ Ղուրան 12:106)

Ուստի Թաուհիիդ ալ-Իբաադահն, երկրպագության միասնության պահպանումը թաուհիիդի կարևոր մասն է : Միայն Նա է արժանի երկրպագման և միայն Նա կարող է պարգևել շահ մարդուն, իր երկրպագության համար:

## **ՇԻՐԿ**

## **Ա. ՍԱՀՄԱՆՈՒՄ**

Թաուհիիդի վերոհիշյալ տեսակները կամ թաուհիիդի չափանիշների բացակայությունը վերաբերում է «շիրկին»: «Շիրկ» նշանակում է զուգընկեր տալը կամ կիսելը: Իսլամական տեսանկյունից այն նշանակում է Ալլահին զուգընկեր տալ , որը և հավասար է կռապաշտության :

## Բ. ՇԻՐԿԸ ՄԵԾ ՄԵՂՔ Է , ՈՐԸ ԱԼԼԱՀԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՆԵՐԻ

Սուրբ Ղուրանը նկարագրում է ամենամեծ մեղքը Սուրա «Նիսա»-ում

« Ալլահը չի ներում, որ զուգընկեր են տալիս Նրան, սակայն նա ներում է ցանկացած այլ բան, ում

Նա է ցանկանում , Ալլահին հավասար զուգընկեր տալը համարվում է իրոք, սարսափելի մեղք:»

(Ղուրան 4:48)

Նույնը կրկնվում է Սուրա «Նիսա»-ում

«Ալլահը չի ներում Նրա հետ աստվածներ զուգակցելու մեղքը, սակայն Նա ներում է ում Նա է ցանկանում դրանից բացի այլ մեղքեր, նա , ով Ալլահին միացնում է ուրիշ աստվածներ գնացել է հեռու, հեռու, ճշմարտությունից:»

(Ղուրան 4:116)

## Գ. ՇԻՐԿԸ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ԴԺՈԽՔԻ ԿՐԱԿԻ

Ղուրանն ասում է Սուրա «Մայիդահ»-ում

« Նրանք չեն ամաչում , ովքեր ասում են . «Ալլահը Քրիստոսն է , Մարիամի որդին» սակայն ասաց Քրիստոսը. «Օվ, Իսրայելի զավակներ, երկրպագեք Ալլահին, իմ Տիրոջը և ձեր Տիրոջը» :Ով միացնում է ուրիշ աստվածներ Ալլահին – Ալլահը կարգելի նրան Այգին և Կրակը կլինի նրա կացարանը: Այնտեղ սխալվողներին չի լինի ոչ մի օգնական:»

(Ղուրան 5:72)

## Դ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ և ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՄԻԱՅՆ ԱԼԼԱՀԻՆ

Սուրա «Ալ-Իմարն»-ում Ղուրանն ասում է .

«Ասա.« օվ Գրքի մարդիկ: Եկեք համաձայնության մեր և ձեր միջև, որ մենք ոչ ոքի չենք երկրպագում բացի Ալլահից , որ մենք զուգընկեր չենք տալիս Նրան, որ մենք բացի Ալլահից ,մեզանից չենք բարձրացնում Տերեր:»» Եթե այնուհետ նրանք շեղվեն, ասա նրանց. «Վկայեք, որ մենք մուսուլմաններ ենք , խոնարհվում են Ալլահի Կամքին:»

(Ղուրան 3:64)

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Ղուրանը ասում է.

«Մի անարգեք նրանց, ովքեր Ալլահին հավասար կոչ են անում, որպեսզի նրանք չլինեն չարությամբ Ալլահի նզովքին, իրենց տգիտությամբ :»

(Ղուրան 6:108)

« Եվ, եթե բոլոր ծառերը երկրի վրա լինեն գրիչներ և օվկիանոսը թանաք, յոթ օվկիանոսներով իր ետևում , ավելացնելու իր պաշարները, Ալլահի Խոսքերը չեն սպառվի գրում, քանի որ Ալլահը Բարձրյալ է հզորությամբ , լի Իմաստությամբ:»

(Ղուրան 31:27)

« Օվ մարդիկ, ահա տրված է առակը: Ունկդրեք դրան: Նրանց, ում դու կոչում եք բացի Ալլահից , չեն կարող արարել նույնիսկ ճանճ , եթե նրանք բոլորը հանդիպեն նպատակի համար: Եվ, եթե ճանճը տանի նրանցից որևէ բան, նրանք իշխանություն չեն ունենա ազատելու այն ճանճից: Առակը նրա համար է, ով խնդրում է:»

(Ղուրան 22:73)

Եվ Ամբողջ Փառքը Ալլահին, աշխարհների Տիրոջը, Արարչին, Սնուցողին և Պահապանին:

[1] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net

[2] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net.

[3] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net.

[4] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net.

[5] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net.

[6] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net

[7] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net

[8] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net

[9] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net

[10] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net

[11] Լրացուցիչ տեղեկությունների համար կապվել webmaster@irf.net